

Անիրաւ մամոնան, կամ երկրաւոր հարստութիւնը օտար դրամ մըն է անոնց Համար՝ որոնք ունին գիտակցութիւնը թէ իրենք երկինքի քաղաքացիներ են, և Երկնային գանձը պէտք է ըլլայ Քրիստոնեային միա'կ, իրա՛ և յաւիտենական ստացուածքները:

Թող Աստուած այս գիտակցութիւնը արթնցնէ մեզմէ իրաքանչիւրին մէջ, որպէսզի մենք ևս, նման առակի Տնտեսին, կարենանք մեզի տրուած շնորհներն ու կարողութիւնները իմաստուն կերպով օգտագործել, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, այժմ և միշտ ... Ամէն:

### ՆՈՒՐՃԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Կիրակի, Մարտ 30, 2003

### ԵՐԵԽԱՆԵՐԸ ԿԸ ՍՈՐՎԵՆ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՊՐԻՆ

Երեխան, որ կ'ապրի հեզնուելով՝ ամշկոտ ըլլալ կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի քննադատուելով՝ մեղադրել կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի կասկածով՝ խորամանկ ըլլալ կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի հակադրուելով՝ ատել կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի զգացումով՝ սիրել կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի քաջալերանրով՝ ինքնավտահ ըլլալ կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի անկեղծութեամբ՝ արդար ըլլալ կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի գովասանքով՝ գնահատել կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի մասնակցելով՝ փափկանկատ ըլլալ կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի զարգանալով՝ իմաստուն ըլլալ կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի համբերութեամբ՝ հանդրժել կը սորվի:

Երեխան, որ կ'ապրի երջանիկ՝ պիտի տիրանայ սիրոյ եւ շնորհրի: